ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

FREEDOM OF INFORMATION CENTER

2010

ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

annual report

Երեւան 2011

2

Հաշվետվությունը հրապարակվում է Ինֆորմացիայի ազատության կենտրոնի կողմից իրականացվող «Տեղեկատվության ազատությունը որպես համայնքային մասնակցության միջոց» ծրագրի շրջանակում, Ամերիկայի Միացյալ Նահանգների Միջազգային զարգացման գործակալության տրամադրած աջակցությամբ:

Այստեղ արտահայտված տեսակետները հեղինակային են եւ չեն արտահայտում ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության տեսակետը:

2010
Տարեկան
հաշվետվություն

Ինֆորմացիայի ազատության կենտրոն

ԻԱԿ-ի հիմնական նպատակներն են

- Նպաստել բաց եւ թափանցիկ կառավարման համակարգի ձեւավորմանը եւ քաղաքացիական հասարակության մասնակցության ապահովմանը:
- Նպաստել տեղեկատվության ազատության մասին ՀՀ օրենսդրության կիրառմանը:

«Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպությունը հիմնադրվել է 2001թ.-ի հունիսի 1-ին Երեւանում մի խումբ լրագրողների եւ իրավաբանների կողմից: Ինֆորմացիայի ազատության կենտրոնի հիմնական առաքելությունն է պաշտպանել քաղաքացիների տեղեկություն ստանալու իրավունքը:

ԻԱԿ-ի գործունեության ուղղություններն են

- **Իրավական խորհրդատվություն եւ դատական պաշտպանություն.**

  ԻԱԿ-ը քաղաքացիներին, ՁԼՄ-ներին, ՀԿ-ներին, լրագրողներին և իրավաբանական անձանց իրավական խորհրդատվություն է տրամադրում տեղեկատվություն ստանալու իրավունքի վերաբերյալ՝ միաժամանակ օգնելով բողոքարկել տեղեկատվություն ստանալու հարցումների անօրինական մերժումները՝ ներառյալ դատական կարգով: 2001-2010թթ. ընթացքում կենտրոնը իրավական խորհրդատվություն եւ աջակցություն է տրամադրել 6000 անձի: 2006-2010թթ ընթացքում ԻԱԿ-ը տեղեկատվության տրամադրումն ապօրինի մերժած պետական կառավարման եւ տեղական ինքնակառավարման մարմինների դեմ 28 դատական գործ է հարուցել՝ 75% դրական արդյունքով, ինչի շնորհիվ վերականգնվել է տեղեկատվություն ստանալու խախտված իրավունքը:

- **Ուսուցումներ**

  ԻԱԿ-ը ՀՀ ողջ տարածքում ուսուցումների միջոցով օգնում է քաղաքացիներին, ՀԿ, ՁԼՄ եւ քաղաքական կուսակցությունների ներկայացուցիչներին, ինչպես նաեւ պետական պաշտոնյաներին զարգացնել իրենց գիտելիքը եւ հմտությունները Տեղեկատվության ազատության ոլորտում: 2003-2010թթ ընթացքում 5000 մարդ՝ այդ թվում 2200 պաշտոնյա, ստացել է գիտելիք եւ հմտություն տեղեկատվության ազատության օրենսդրության վերաբերյալ:

- **Հանրային քարոզարշավ**

  2001թ.-ից մինչ օրս Ինֆորմացիայի ազատության կենտրոնն իրականացնում է հանրային լայն քարոզարշավ տեղեկատվության ազատության խնդիրներին հանրությանն իրազեկելու նպատակով: Կենտրոնը հրապարակում է «Դու տեղյակ լինելու իրավունք ունես» տեղեկագիրը, որը ՏԱ ոլորտի մասին միակ մասնագիտացված պարբերականն է Հայաստանում: Տեղեկագրի յուրաքանչյուր համարում հրապարակվում է այն պաշտոնյաների «Սեւ ցուցակը», որոնք ոտնահարել են քաղաքացիների, լրագրողների, հասարակական կազմակերպությունների եւ իրավաբանական անձանց տեղեկատվություն ստանալու իրավունքը: ԻԱԿ-ը ՁԼՄ-ներով լայնորեն հրապարակայնացնում է տեղեկություն ստանալու իրավունքի խախտումները:

Օրենսդրական բարեփոխումներ

Ինֆորմացիայի ազատության կենտրոնն ակտիվ դերակատարում է ունեցել «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի մշակման և ընդունման գործում: Ներկայումս ԻԱԿ-ը նախաձեռնել է ՏԱ օրենսդրության բարեփոխումների երկրորդ սերնդի մշակման եւ ընդունման գործընթացը: Բարեփոխումների փաթեթը մշակվել է ՀՀ Արդարադատության նախարարության, ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Վիկտոր Դալլաքյանի եւ քաղաքացիական հասարակության հետ համատեղ: Ներկայումս մշակված ՏԱ օրենսդրական փաթեթն ընդգրկված է ՀՀ Ազգային ժողովի նստաշրջանի քառօրյա օրակարգում:

Բարեփոխումներ էլեկտրոնային կառավարման ոլորտում

ԻԱԿ-ն իրականացնում է մի շարք ծրագրեր կառավարման համակարգում էլեկտրոնային կառավարման նոր մեխանիզմներ ներդնելու, կատարելագործելու եւ դրանց հրապարակայնության ապահովմանն ու մարդկանց տեղեկություն ստանալու իրավունքի իրականացմանն ուղղելու նպատակով:

ՏԱ օրենսդրության կիրառման եւ կառավարման համակարգի հրապարակայնության մոնիտորինգ

ԻԱԿ-ն իրականացնում է ՏԱ մասին ՀՀ օրենսդրության կիրառման պրակտիկայի մշտական դիտարկում պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում: Ինֆորմացիայի ազատության կենտրոնը տարեկան 1000-ից ավելի տեղեկություն ստանալու հարցումներ է ուղարկում պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններ՝ այսպիսով լինելով «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքն ամենաակտիվ օգտագործող կազմակերպություններից մեկը:

ԾՐԱԳՐԵՐ

2010թ.-ի ընթացքում «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպությունն իրականացրել է 2 ծրագիր՝ Համաշխարհային բանկի Երեւանի գրասենյակի եւ ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության ֆինանսական աջակցությամբ:

1 Տեղեկատվության ազատություն

Համաշխարհային բանկի հետ համատեղ Ինֆորմացիայի ազատության կենտրոնն իրականացրել է «Տեղեկատվության ազատություն» ծրագիրը, որի հիմնական նպատակն էր բարելավել հանրային թափանցիկությունն ու հաշվետվողականությունը՝ խթանելով տեղեկատվության ազատության օրենսդրության կիրառումը: Ծրագրի տեւողությունը 5 ամիս էր՝ 2010թ. հուլիսից նոյեմբեր:

Ծրագրի շրջանակներում կատարվել են հետեւյալ գործողությունները.

- Տեղեկատվության ազատության ոլորտի կարիքների գնահատման նպատակով 2 ֆոկուս քննարկում է կազմակերպվել՝ ուսանողների եւ պաշտոնյաների մասնակցությամբ:
- Երկու ուսումնական տեսաֆիլմի պատրաստում (մեկը՝ պետական պաշտոնյաների համար՝ ՏԱ ոլորտում նրանց օրենսդրական պարտավորությունների արդյունավետ կատարման մասին, մյուսը՝ ուսանողների համար՝ ՏԱ օրենսդրության նպատակային օգտագործման մասին):
- Մշակվել եւ հրատարակվել է ՏԱ օրենսդրության մասին մեկնաբանությունների գիրք:
- Տպագրվել են ուսանողների համար նախատեսված տեղեկություն ստանալու իրավունքի վերաբերյալ պաստառներ:
- Կազմակերպվել է ՏԱ ամենամյա մրցանակաբաշխություն-2010:

2 Տեղեկատվության ազատությունը որպես համայնքային մասնակցության միջոց

ԱՄՆ ՄԶԳ աջակցությամբ Ինֆորմացիայի ազատության կենտրոնն իրականացնում է «Տեղեկատվության ազատությունը որպես համայնքային մասնկացության միջոց» 5-ամյա ծրագիրը (2008-2013թ.թ.):

Ծրագրի հիմնական խնդիրներն են նպաստել մարդկանց մասնակցությանը համայնքային կառավարման և հանրային խնդիրների լուծման գործընթացներին, ինչպես նաև տեղեկատվության մատչելիության արդյունավետությունը բարձրացնելու միջոցով խթանել բաց և թափանցիկ կառավարման համակարգի ձեւավորումը:

Ծրագրով նախատեսված գործողություններն են.

- Տեղեկատվության ազատության ոչ ֆորմալ կրթական կենտրոնի հիմնադրում եւ պետական եւ համայնքային ծառայողների ուսուցումների անցկացում:
- Պետական կառավարման եւ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից սեփական նախաձեռնությամբ տեղեկությունների հրապարակման մեխանիզմների բարելավում:
- Ռազմավարական դատական գործերի ստեղծում:
- Հանրային քարոզարշավ տեղեկություն ստանալու իրավունքի իրազեկման նպատակով:

Նշված ծրագրերով նախատեսված գործողություններից բացի ԻԱԿ-ը տարվա ընթացքում իրականացրել է նաեւ հետեւյալ գործողությունները.

- Խորհրդատվություն քաղաքացիներին տեղեկություն ստանալու իրավունքի իրազեկման նպատակով:
- ՏԱ օրենսդրություն կիրառման պրակտիկայի մոնիտորինգ:
- Միջոցառումներ:

1 Տեղեկատվության ազատության ոչ ֆորմալ կրթական կենտրոնի հիմնադրում և ուսուցումների անցկացում

2010թ.-ի նոյեմբերին Ինֆորմացիայի ազատության կենտրոնը հիմնադրեց «Տեղեկատվության ազատության ոչ ֆորմալ կրթական կենտրոն»՝ այդպիսով դառնալով պետական պաշտոնյաներին ՏԱ ազատության վերաբերյալ գիտելիքով եւ հմտություններով ապահովող կայուն ինստիտուցիոնալ մեխանիզմ: Կենտրոնի նպատակն է ուսուցանել քաղաքացիական եւ համայնքային ծառայողներին տեղեկատվության ազատության իրավունքի, «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի կիրառման պրակտիկայի, տեղեկատվության էլեկտրոնային կառավարման, ինչպես նաեւ պաշտոնյաների էթիկայի վերաբերյալ:

Կրթական կենտրոնում ուսուցումները սկսվեցին 2010թ.-ի նոյեմբերից: Նոյեմբերի 25-ին առաջին շրջանավարտ քաղաքացիական ծառայողներին տրվեցին ավարտական պետական վկայականներ հաջողությամբ 3-օրյա ուսուցումներն ավարտելու համար: 2010թ. նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին կրթական կենտրոնում վերապատրաստման դասընթացներին մասնակցեց 101 քաղաքացիական ծառայող ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի կոմիտեից, ՀՀ ԿԱ Պետեկամուտների կոմիտեից, Սոցիալական ապահովության ծառայությունից, ինչպես նաեւ պետական կառավարման այլ թիրախային մարմիններից: Դասընթացներից յուրաքանչյուրի տեւողությունը 3 օր է, որի ընթացքում մասնակից պաշտոնյաներին գիտելիք է տրվում տեղեկատվության ազատության իրավունքի, «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի կիրառման պրակտիկայի, տեղեկատվության էլեկտրոնային կառավարման, ինչպես նաեւ՝ ղեկավար-ենթակա եւ միջանձնային հարաբերությունների, պաշտոնյաների էթիկայի վերաբերյալ:

Դասընթացներն իրականացվում են ՀՀ քաղաքացիական ծառայության խորհրդի 2010թ. հոկտեմբերի 28-ի N847 որոշմամբ հաստատված «Ամբողջականության հիմունքները եւ տեղեկատվության ազատությունը եւ հասարակայնության հետ կապերի ապահովումը կառավարման համակարգում» ծրագրով: Դասընթացներն իրականացվում են ՀՀ քաղաքացիական ծառայության խորհրդի եւ ՀՀ Քաղաքացիական ծառայողների միության հետ համատեղ:

Ուսուցումներ

2001-2010թ.թ.-ի ընթացքում ԻԱԿ-ը ՀՀ ողջ տարածքում տեղեկատվության ազատության վերաբերյալ ՀՀ օրենսդրության կիրառման դասընթացներ է կազմակերպել պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների համար՝ օգնելով դասընթացների մասնակիցներին զարգացնել իրենց գիտելիքը տեղեկատվության ազատության ոլորտում:

2010թ.-ի ընթացքում Ինֆորմացիայի ազատության կենտրոնն ուսուցումներ է իրականացրել Երեւանում, Արմավիրի, Լոռու եւ Կոտայքի մարզերում: Երեւանում իրականացվել է 10 ուսուցում: Այդ ուսուցումների ընթացքում տեղեկատվության ազատության վերաբերյալ կրթություն են ստացել քաղաքացիական հասարակության 114 ներկայացուցիչ եւ 309 պաշտոնյա:

Արմավիրի եւ Լոռու մարզերում Ինֆորմացիայի ազատության կենտրոնն իրականացրել է մեկական ուսուցում, որոնց մասնակցել է 61 պաշտոնյա, իսկ Կոտայքի մարզում՝ չորս ուսուցում, որոնց ժամանակ ՏԱ մասին գիտելիք է ստացել 150 պաշտոնյա:

Կառավարման համակարգում էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության «Մալբերի» համակարգի արդյունավետ գործարկմանը նպաստելու համար 2010թ. փետրվարի 26-27 ԻԱԿ-ը կազմակերպել է 2 երկօրյա աշխատանքային քննարկումներ ՀՀ բոլոր մարզպետարանների աշխատակազմերի ղեկավարների հետ: Սրան հաջորդեց նաեւ մարտի 4-ին կազմակերպված աշխատանքային քննարկումը բոլոր մարզպետարանների հասարակայնության հետ կապերի վարչությունների ղեկավարների հետ: Հանդիպումների նպատակն էր կանխատեսել, թե ինչ խնդիրներ կարող են ծագել մարզպետարաններում Մալբերիի գործարկման ընթացքում եւ կանխել դրանք: Այս աշխատանքային քննարկումների ընթացքում առաջ քաշվեց մարզպետարանների եւ ՀՀ ՏԿՆ ինտերնետային կայքերի բարեփոխման գործընթաց սկսելու հարցը:

Որպես աշխատանքային քննարկման մեկ այլ արդյունք ԻԱԿ-ը Երեւանում երկօրյա տասը ուսուցումների շարք անցկացրեց ՀՀ բոլոր մարզպետարանների 40 աշխատակցի համար՝ նպատակ ունենալով կատարելագործել մարզպետարանների աշխատակիցների հմտությունները եւ գիտելիքը “Մալբերի» համակարգի գործարկման եւ օգտագործման վերաբերյալ:

2010թ.-ին Ինֆորմացիայի ազատության կենտրոնն իրականացրել է 23 ուսուցում, որոնց շնորհիվ տեղեկատվության ազատության իրավունքի վերաբերյալ գիտելիք է ստացել քաղաքացիական հասարակության 114 ներկայացուցիչ՝քաղաքացիներ, լրագրողներ, ՀԿ ներկայացուցիչներ, 410 պաշտոնյա:

Տեղեկատվության ազատության ուսուցումների արդունավետությունը բարձրացնելու նպատակով 2010թ.-ին ԻԱԿ-ը պատրաստել է երկու ուսումնական տեսաֆիլմ՝ «Տեղեկատվություն տրամադրելու Ձեր պարտականությունը» եւ «Տեղեկացված լինելու իմ իրավունքը» վերնագրերով:

Ուսումնական տեսաֆիլմերի պատրաստում

«Տեղեկատվություն տրամադրելու Ձեր պարտականությունը» տեսաֆիլմը նախատեսված է պետական կառավարման եւ տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչների համար: Այս տեսաֆիլմը ներկայացնում է, թե պաշտոնյաները ինչ պարտականություններ ունեն տեղեկատվության ազատության ոլորտում, ինչպես նաեւ ներկայացնում է պաշտոնյաների՝ քաղաքացիների տեղեկատվություն ստանալու հարցումներին սահմանված ժամկետներում, ամբողջական եւ պատշաճ տեղեկատվություն տրամադրելու պարտականության կատարման գործընթացը:

«Տեղեկացված լինելու իմ իրավունքը» տեսաֆիլմը նախատեսված է ուսանողների համար՝ նպատակ ունենալով երիտասարդներին հասցնել տեղեկատվության ազատության իրավունքի գաղափարը եւ կարեւորությունը: Այս տեսաֆիլմում մատչելի լեզվով եւ պատկերավոր ձեւով ներկայացված է, թե ինչպես կարող են ուսանողներն օգտագործել «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի դրույթները պետական մարմինների տնօրինած տեղեկատվությունը ստանալու համար, ինչ անել մերժման դեպքում եւ ինչպես բողոքարկել ապօրինի մերժումները:

2 Պետական մարմինների կողմից սեփական նախաձեռնությամբ տեղեկությունների հրապարակման մեխանիզմների բարելավում

Տեղեկատվական ցուցատախտակներ

2010թ.-ին ԻԱԿ-ը ՀՀ 8 համայնքներում՝ 4 գյուղական (Քուչակ, Բալահովիտ, Ջրաշեն եւ Մրգավան) եւ 4 քաղաքային (Արտաշատ, Եղվարդ, Սպիտակ եւ Ապարան), տեղադրել է 40 տեղեկատվական ցուցատախտակներ, որոնց միջոցով տեղական ինքնակառավարման մարմինները պետք է հրապարակեն իրենց տնօրինման տակ գտնվող տեղեկատվությունը: Այս տեղեկատվական ցուցատախտակները տեղական ինքնակառավարման մարմինների համար պարտադիր հրապարակման ենթակա տեղեկությունները մատչելի դարձնելու ճկուն, ոչ ծախսատար եւ արդյունավետ միջոց են:

Տեղեկատվական ցուցատախտակների վրա փակցվող տեղեկատվությունը բաղկացած է երկու մասից՝ փոփոխվող եւ անփոփոխ: Անփոփոխ մասում ներկայացված են «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի հիմնական դրույթները, տեղեկություններ, թե ինչպես կարող է քաղաքացին իրականացնել իր՝ տեղեկություն ստանալու իրավունքը, ինչպես նաեւ տեղեկություն ստանալու հարցման օրինակելի ձեւ: Ցուցատախտակի չփոփոխվող մասում ներկայացվում են այնպիսի անհրաժեշտ տեղեկություններ, ինչպիսին է համայնքի բյուջեն, բյուջեի կատարման հաշվետվությունը, համայնքի ղեկավարի եւ ավագանու որոշումների պատճենները, համայնքի ավագանու նիստերի վերաբերյալ տեղեկատվություն եւ այլն: Ցուցատախտակի այս հատվածը թարմացվելու է մշտական հիմունքներով:

Այս գործընթացի շրջանակներում ԻԱԿ նախագահի եւ թիրախ 8 համայնքների ղեկավարների միջեւ կնքվել է հուշագիր, որով համայնքի ղեկավարները պարտավորվել են պարբերաբար (առնվազն ամիսը մեկ անգամ) թարմացնել ցուցատախտակներում հրապարակվող տեղեկատվությունը, ինչպես նաեւ ապահովել համայքի բնակիչների տեղեկացվածությունը ցուցատախտակների մասին: Համայնքի ղեկավարները պարտավորվել են ապահովել ցուցատախտակների օգտագործումը բացառապես հանրային նպատակներով, այսինքն, պետք է իսպառ բացառվի գովազդի տեղադրումը դրանց վրա:

Հայաստանի ողջ տարածքում վերջին 3 տարիների ընթացքում ԻԱԿ-ը տեղադրել է 210 տեղեկատվական ցուցատախտակ ՀՀ 35 համայնքում:

Էլեկտրոնային կառավարման մեխանիզմների բարելավում

Այս նպատակով Ինֆորմացիայի ազատության կենտրոնը 2010թ.-ի ընթացքում սկսել է ՀՀ Տարածքային կառավարման նախարարության եւ հանրապետության 10 մարզպետարանների տեղեկատվական պորտալների համալիր բարեփոխման գործընթացը: Կենտրոնը նախաձեռնել է վեբ պորտալների ցանցի ստեղծում, որը հանրությանը կտրամադրի համապարփակ եւ լիարժեք տեղեկատվություն մարզպետարանների եւ Տարածքային կառավարման նախարարության գործունեության վերաբերյալ, ինչպես նաեւ կապահովի այս մարմիններում առկա հանրության համար կարեւոր եւ անհրաժեշտ տեղեկատվության մատչելիությունն ու բացությունը (համայնքային բյուջեներ եւ դրանց կատարման հաշվետվություններ, ֆինանսական հատկացումներ, մարզպետերի որոշումներ, ինչպես նաեւ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքով սահմանված պարտադիր հրապարակման ենթակա 13 խումբ տեղեկությունները):

ՀՀ Տարածքային կառավարման նախարարության եւ ԻԱԿ-ի միջեւ կնքվել է գրավոր համաձայնագիր՝ ՀՀ ՏԿՆ եւ 10 մարզպետարանների տեղեկատվական պորտալների համալիր բարեփոխման վերաբերյալ: ՀՀ Տարածքային կառավարման նախարարությունը ծրագրի իրականացման նպատակով մշակել եւ Ինֆորմացիայի ազատության կենտրոնին է ներկայացրել նոր կայքերի ստեղծման տեխնիկական առաջադրանքները:

ԻԱԿ-ը նաեւ աջակցում է ՀՀ կառավարությանը կառավարման համակարգում էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության «Մալբերի» համակարգն արդյունավետ գործարկելու հարցում: Այս նպատակով անցկացվել է ուսուցումների եւ աշխատանքային քննարկումների շարք ՀՀ մարզպետարանների աշխատակազմերի ղեկավարների եւ հասարակայնության հետ կապերի վարչությունների եւ բաժինների աշխատակիցների համար:

3 Ռազմավարական դատական գործեր

Ինֆորմացիայի ազատության կենտրոնն իրականացնում է տեղեկատվության ազատության վերաբերյալ դատական գործեր այն պաշտոնյաների դեմ, ովքեր խախտում են քաղաքացիների տեղեկատվություն ստանալու իրավունքը, անպատասխան են թողնում ՏԱ հարցումները կամ տրամադրում են ողջ ամբողջական կամ թերի տեղեկատվություն: Այս գործընթացի շնորհիվ աստիճանաբար ձեւավորվում է տեղեկատվության ազատության վերաբերյալ դատական նախադեպային պրակտիկա:

2003թ.-ից ի վեր Ինֆորմացիայի ազատության կենտրոնն իրականացնում է տեղեկատվության ազատության իրավունքի դատական պաշտպանության առաքելությունը: Մինչ օրս Ինֆորմացվիայի ազատության կենտրոնի նախաձեռնությամբ հարուցվել է 34 դատական գործ՝ տեղեկատվություն ստանալու իրավունքի ոտնահարման վերաբերյալ, որոնցից 32-ն ամբողջությամբ ավարտվել է, եւ միայն 2 գործ է դեռեւս ընթացքի մեջ:

2010թ.-ի ընթացքում ավարտվել է Ինֆորմացիայի ազատության կենտրոնի նախաձեռնած 6 դատական գործ, ինչպես նաեւ մեկ նախադեպային կարեւոր նշանակություն ունեցող գործ՝ ԻԱԿ դիմումը ՀՀ Սահմանադրական դատարան:

Վերոնշյալ 6 դատական գործերն են՝

- ԻԱԿ-ը եւ «Առավոտ» օրաթերթն ընդդեմ Լոռու մարզպետարանի,
- ԻԱԿ-ը եւ «Առավոտ» օրաթերթն ընդդեմ Շիրակի մարզպետարանի,
- ԻԱԿ-ն ընդդեմ Փարաքարի գյուղապետարանի,
- ԻԱԿ-ն ընդդեմ «Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի,
- ԻԱԿ-ն ընդդեմ «Թիվ 2 բուժմիավորում» ՓԲԸ-ի,
- ԻԱԿ-ն ընդդեմ Հայաստանի Աշխատավորական Սոցիալիստական Կուսակցության դատական գործերը:

Գործերի մանրամասները եւ կից փաստաթղթերը կարող եք գտնել ԻԱԿ-ի ինտերնետային կայքի ռազմավարական դատավարություն բաժնում՝ http://www.foi.am/hy/all-cases/

ԻԱԿ-ը եւ «Առավոտ» օրաթերթն ընդդեմ Լոռու մարզպետրանի

«Առավոտ» թերթի մարզերի և Սփյուռքի էջի պատասխանատու, լրագրող Արամ Զաքարյանը 19.08.2009թ-ին Լոռու մարզպետ Արամ Քոչարյանին՝ lori@mta.gov.am էլ. փոստի հասցեով հետևյալ բովանդակությամբ տեղեկատվություն ստանալու հարցում է ներկայացրել.

«Հարգելի պարոն Քոչարյան,

ինչպես հայտնի է՝ սկսած 2005 թ.-ից, ՀՀ պետական բյուջեով, բացի մարզպետարանների պահպանման ծախսերից, «Այլ նպաստներ բյուջեից» տողով ՀՀ մարզպետարանները գումարներ են ստանում: 2005, 2006, 2007 թվականներին յուրաքանչյուր մարզպետարան ստացել է 10-ական միլիոն դրամ, իսկ 2008 եւ 2009 թվականներին՝ 20-ական միլիոն: Խնդրում եմ պատասխանել հետեւյալ հարցերին.

1. Ի՞նչ նպատակներով են ծախսվել այդ գումարները՝ ըստ տարիների:
2. Խնդրում եմ մանրամասնել՝ ամեն տարի քանի՞ որոշում է կայացվել, ինչքա՞ն գումար է ծախսվել ամեն որոշմամբ»:

Սակայն հարցումը մնացել է անպատասխան: Եվ լրագրող Արամ Զաքարյանը դիմել է Ինֆորմացիայի ազատության կենտրոնին՝ խնդրելով օգնել իրեն՝ դատական կարգով վերականգնելու իր՝ տեղեկություն ստանալու խախտված իրավունքը: Մայիսի 25-ին ՀՀ վարչական դատարանը հրապարակեց ԻԱԿ-ն ու «Առավոտ» օրաթերթն ընդդեմ Լոռու մարզպետի գործով վճիռը: Դատարանը մերժեց հայցը, քանի որ Լոռու մարզպետարանը վճռի հրապարակումից 1 օր առաջ «Առավոտ» օրաթերթին տրամադրել էր հայցվող ողջ տեղեկատվությունը: Նաեւ դատարանը գտավ, որ օրաթերթի կողմից ՀՀ Լոռու մարզպետին ուղարկված մարզպետարանի ոչ պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեով էլեկտրոնային տարբերակով ուղարկված հարցմանը չպատասխանելը չի կարող գնահատվել ոչ իրավաչափ: ԻԱԿ-ն ու «Առավոտ» օրաթերթը ՀՀ վարչական դատարանի վճիռը բողոքարկել են ՀՀ Վճռաբեկ դատարանում:

Սակայն 2010թ. հուլիսի 21-ի որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական եւ վարչական պալատը մերժեց ԻԱԿ-ի եւ «Առավոտ» օրաթերթի վճռաբեկ բողոքը: ՀՀ վճռաբեկ դատարանը գտավ, որ դատական սխալ տեղի չի ունեցել, որ հիմնավորված չէ նյութական եւ դատավարական իրավունքի խախտման առկայությունը, որն ազդել է գործի ելքի վրա:

ԻԱԿ-ը եւ «Առավոտ» օրաթերթն ընդդեմ Շիրակի մարզպետարանի

«Առավոտ» օրաթերթի մարզերի և Սփյուռքի էջի պատասխանատու, լրագրող Արամ Զաքարյանը 19.08.2009թ-ին Շիրակի մարզպետ Լիդա Նանյանին՝ marzpetaran@shirak.region.am էլ. փոստի հասցեով հետևյալ բովանդակությամբ տեղեկատվություն ստանալու հարցում է ներկայացրել.

«Հարգելի տիկին Նանյան,

ինչպես հայտնի է՝ սկսած 2005 թվականից, ՀՀ պետական բյուջեով, բացի մարզպետարանների պահպանման ծախսերից, «Այլ նպաստներ բյուջեից» տողով ՀՀ մարզպետարանները գումարներ են ստանում: 2005, 2006, 2007 թվականներին յուրաքանչյուր մարզպետարան ստացել է 10-ական միլիոն դրամ, իսկ 2008 եւ 2009 թվականներին՝ 20-ական միլիոն: Խնդրում եմ պատասխանել հետեւյալ հարցերին:

1. Ի՞նչ նպատակներով են ծախսվել այդ գումարները՝ ըստ տարիների:
2. Խնդրում եմ մանրամասնել՝ ամեն տարի քանի՞ որոշում է կայացվել, ինչքա՞ն գումար է ծախսվել ամեն որոշմամբ»:

Սակայն հարցումը մնացել է անպատասխան: Եվ լրագրող Արամ Զաքարյանը դիմել է Ինֆորմացիայի ազատության կենտրոնին՝ խնդրելով օգնել իրեն՝ դատական կարգով վերականգնելու իր՝ տեղեկություն ստանալու խախտված իրավունքը:

01.12.09թ. ԻԱԿ-ը «Առավոտ» օրաթերթի հետ համատեղ ՀՀ վարչական դատարան ճանաչման և գործողության կատարման հայց է ներկայացրել՝ Շիրակի մարզպետի անգործությունը ոչ իրավաչափ ճանաչելու, որպես հետևանք տեղեկատվություն տրամադրել պարտադրելու և վարչական տույժի ենթարկելու պահանջների մասին:

Մարզպետարանի հավաստմամբ՝ իրենք տեղեկատվություն ստանալու հարցումը չեն ստացել, քանի որ առկա է եղել տեխնիկական խնդիր: Մարզպետարանը պատրաստակամություն է հայտնել տրամադրել պահաջվող ողջ տեղեկատվությունը, ուստի կողմերի միջեւ կնքվեց հաշտություն: 2010 թվականի հունիսի 1-ին ՀՀ Վարչական դատարանը (Գյումրու նստավայր) հրապարակեց ԻԱԿ-ն ու «Առավոտ» օրաթերթն ընդդեմ Շիրակի մարզպետարանի դատական գործով վճիռը: Ինֆորմացիայի ազատության կենտրոնը եւ «Առավոտ» օրաթերթը որոշեցին հաշտություն կնքել Շիրակի մարզպետարանի հետ:

ԻԱԿ-ն ընդդեմ Փարաքարի գյուղապետարանի

2008թ. դեկտեմբերին Ինֆորմացիայի ազատության կենտրոնին էին դիմել Փարաքար համայնքի բնակիչներ Սեդա Ղազարյանը եւ Արմեն Ներսիսյանը՝ բողոքելով, որ Փարաքարի գյուղապետն իրենց տեղեկատվություն չի տրամադրում: ԻԱԿ-ը դեկտեմբերի 12-ին տեղեկատվություն ստանալու հարցում էր ուղարկել Փարաքարի գյուղապետին, որի մեջ ներառել էր գյուղի բնակիչների պատասխան չստացված հարցերը, որոնք են.

1. Փարաքար գյուղի Մեքենագործների փող. 1-ին շենքի մոտով անցնող մայր առվի ձախ ափին, ճանապարհին կից տարածքում գտնվող 250-260քմ հողամասը ներառվա՞ծ է արդյոք ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում:
2. Եթե այո, խնդրում ենք հայտնել, թե ի՞նչ հիմքով եւ պատճառով,
3. Եթե ոչ, խնդրում ենք հայտնել այդ մասին:

2009թ. հունվարի 10-ին գյուղապետից ստացված պատասխանը թերի էր: Հետեւաբար, ԻԱԿ-ը դիմեց դատարան, որպեսզի դատական կարգով ամբողջական եւ սպառիչ պատասխան ստանա

համայնքապետից: Հուլիսի 30-ին ՀՀ վարչական դատարանում (դատավոր Ա. Ծատուրյան) քննվեց ԻԱԿ-ն ընդդեմ Փարաքարի գյուղապետի եւ գյուղապետարանի գործը:

Օգոստոսի 13-ին ՀՀ վարչական դատարանը վճռեց ԻԱԿ-ի հայցն ընդդեմ Փարաքարի գյուղապետարանի մերժել՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՀ կառավարությունը դեռեւս չի հաստատել համապատասխան ծրագիրը, որի մեջ ընդգրկվելու են ԻԱԿ-ին հետաքրքրող հողամասին առնչվող տեղեկությունները:

15.09.2009թ. ԻԱԿ-ը ՀՀ վարչական դատարանի վճիռը բողոքարկեց վճռաբեկության կարգով՝ նյութական եւ դատավարական իրավունքի խախտման հիմքով: ՀՀ վճռաբեկ դատարանը ԻԱԿ-ի բողոքն ամբողջությամբ բավարարեց եւ գործն ուղարկեց նոր քննության: 2010թ. մայիսի 31-ին ՀՀ վարչական դատարանը, նույն գործը երկրորդ անգամ քննելով, ի վերջո բավարարեց ընդդեմ Փարաքարի գյուղապետարանի ԻԱԿ-ի հայցը:

Դատարանը վճռեց ոչ իրավաչափ ճանաչել ԻԱԿ-ի հարցմանը ոչ պատշաճ պատասխանելուն ուղղված ՀՀ Արմավիրի մարզի Փարաքարի գյուղապետարանի գործողությունները, ինչպես նաեւ պարտավորեցնել Փարաքարի գյուղապետարանին տրամադրել ԻԱԿ-ի հարցման պատասխանը: Փարաքարի գյուղապետարանը բողոքարկեց ՀՀ վարչական դատարանի վճիռը ՀՀ վճռաբեկ դատարան: 2010թ.-ի օգոստոսի 18-ին ՀՀ Վճռաբեկ դատարանը որոշեց վերադարձնել Փարաքարի գյուղապետարանի բողոքը եւ ուժի մեջ թողնել ԻԱԿ-ի օգտին ՀՀ Վարչական դատարանի կայացրած վճիռը:

ԻԱԿ-ն ընդդեմ «Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի

Ինֆորմացիայի ազատության կենտրոնը 2009թ. սեպտեմբերի 17-ին տեղեկություն ստանալու հարցում է ուղարկել «Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն Աշոտ Պետրոսյանին՝ խնդրելով տրամադրել հետեւյալ տեղեկությունները.

1. Մինչեւ սույն թվականի օգոստոսի 1-ը ՊՈԱԿ-ի ռեեստրում փորձաքննություն իրականացնող քանի՞ մասնավոր ընկերություն է գրանցված եւ այդ ընկերություններն ու՞մ անունով են գրանցված: Նշեք հավատարմագիր ստացած ընկերությունների անունները:
2. Տրամադրեք նաեւ ՊՈԱԿ-ի աշխատողների 2008 եւ 2009 թվականների հաստիքացուցակներն ու նույն ժամանակահատվածի աշխատողների աշխատավարձերի չափը հաստատող ցուցակը:

ՊՈԱԿ-ը մերժեց տրամադրել տեղեկությունները՝ առաջարկելով տեղեկատվության ստացման նպատակով դիմել ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության մամուլի ծառայությանը: Այս գրությամբ, փաստորեն, պատասխան չտրվեց ԻԱԿ-ի հարցմանը: 2009թ.-ի սեպտեմբերի 29-ին Ինֆորմացիայի ազատության կենտրոնը «Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի դեմ տեղեկատվություն տրամադրել պարտավորեցնելու եւ վարչական պատասխանատվության ենթարկելու մասին վարչական հայց ներկայացրեց դատարան:

2010թ.-ի հունվարի 29-ին հրապարակվեց Ինֆորմացիայի ազատության կենտրոնն ընդդեմ «Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի դատական գործով դատարանի վճիռը: Դատարանը վճռեց հայցն ամբողջությամբ բավարարել՝ պարտավորեցնելով «Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ին հնգօրյա ժամկետում տրամադրել հայցվող տեղեկատվությունը: Վերջինս ԻԱԿ-ին տրամադրեց պահանջվող ողջ տեղեկատվությունը:

ԻԱԿ-Ն ընդդեմ «Թիվ 2 բուժմիավորում» ՓԲԸ-ի

2009թ.-ի հունիսի 10-ին «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ն դիմեց «Թիվ 2 բուժմիավորում» ՓԲԸ-ին՝ խնդրելով տրամադրել հետեւյալ տեղեկությունները.

1. Թիվ 2 բուժմիավորման մանկական պոլիկլինիկայում մինչեւ 7 տարեկան երեխաներին տրամադրվող դեղերի հատկացման կարգը:
2. Առկա անվճար տրամադրվող դեղերի ցուցակի պատճեն:
3. Նաեւ տեղեկացնել, որ եթե երեխան հիվանդ է եւ բուժման համար անհրաժեշտ դեղորայքը ներառված չէ վերոնշյալ ցուցակում, ապա կա՞ այլ տարբերակ՝ մինչեւ 7 տարեկան երեխային անվճար տրամադրելու այդ դեղը:
4. Ինչպե՞ս եւ տրամադրեք խնդրեմ տարբերակ, թե ինչ անի ծնողը, եթե անվճար տրամադրվող դեղերի ցուցակում կա դեղ, որի կարիքն ունի հիվանդ երեխան, եւ այն բժշկի կողմից չի տրամադրվում:

«Թիվ 2 բուժմիավորում» ՓԲԸ-ն ԻԱԿ-ի հարցմանը որեւէ պատասխան չտվեց: Ուստի, ԻԱԿ-ը հայց ներկայացրեց Կենտրոն եւ Նորք Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան՝ խնդրելով «Թիվ 2 բուժմիավորում» ՓԲԸ-ին պարտավորեցնել տրամադրել պահանջված տեղեկությունը եւ «Թիվ 2 բուժմիավորում» ՓԲԸ-ի գլխավոր տնօրեն Տիգրան Խաչատրյանին ենթարկել վարչական պատասխանատվության՝ տուգանքի՝ 50.000 դրամի չափով:

2010 թվականի ապրիլի 27-ին Կենտրոն եւ Նորք Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանը հրապարակեց Ինֆորմացիայի ազատության կենտրոնն ընդդեմ «Թիվ 2 բուժմիավորում» ՓԲԸ-ի գործով վճիռը: 2009 թվականի դեկտեմբերի 2-ին սկսված դատավարության ընթացքում «Թիվ 2 բուժմիավորում» ՓԲԸ-ն տրամադրեց ԻԱԿ-ի հարցման պատասխանը: Իսկ ԻԱԿ-ի երկրորդ պահանջը՝ «Թիվ 2 բուժմիավորում» ՓԲԸ-ի տնօրեն Տիգրան Խաչատրյանին վարչական պատասխանատվության ենթարկելու մասին դատարանը մերժեց:

ԻԱԿ-Ն ընդդեմ Հայաստանի Աշխատավորական Սոցիալիստական Կուսակցության (ՀԱՍԿ)

Ինֆորմացիայի ազատության կենտրոնը 21.04.2009թ.-ին Հայաստանի Աշխատավորական Սոցիալիստական Կուսակցության նախագահ Մովսես Շահվերդյանին տեղեկատվություն ստանալու հարցում էր ուղարկել՝ խնդրելով տրամադրել հետեւյալ տեղեկությունները.

1. ՀԱՍԿ-ի 2008թ. ֆինանսական հաշվետվության պատճեն:
2. ՀԱՍԿ-ի ստացած՝ օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից ավելի արժողությամբ նվիրատվության աղբյուրների մասին տեղեկատվություն:

Հարցումը, սակայն, մնացել էր անպատասխան: Ուստի, ԻԱԿ-ը 09.07.2009թ.-ին ՀՀ Կենտրոն եւ Նորք Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարան տեղեկատվություն տրամադրել պարտադրելու պահանջի մասին հայց ներկայացրեց: Մի քանի ամիս շարունակ դատական նիստի օրը չէր նշանակվում, քանի որ դատարանը չէր կարողանում ճշտել ՀԱՍԿ-ի հասցեն եւ պատշաճ կերպով ծանուցել /ծանուցագիր ուղարկել/ դատական նիստի օրվա մասին: Դատարանին ի վերջո հաջողվել էր պարզել պատասխանողի հասցեն եւ պատշաճ կերպով ծանուցել դատական նիստի մասին: Սակայն Հայաստանի աշխատավորական սոցիալիստական կուսակցությունը չէր ներկայացել դատարան: Դատարանը որոշեց նիստն անցկացնել պատասխանող կողմի բացակայությամբ:

2010թ. մարտի 18-ին Երեւան քաղաքի Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանը՝ դատավոր Էդիկ Ավետիսյանի նախագահությամբ, լիովին բավարարեց ԻԱԿ-ի հայցն ընդդեմ Հայաստանի Աշխատավորական սոցիալիստական կուսակցության: Սակայն ՀԱՍԿ-ը դատարանի վճիռը չկատարեց: Ուստի, 2010թ. հուլիսի 29-ին ԻԱԿ-ը դիմել է ՀՀ ԱԴ Դատական ակտերի հարկադիր կատարման ծառայություն՝ ՀԱՍԿ-ին դատարանի վճիռը կատարել պարտավորեցնելու համար:

2011թ. հունվարի 25-ին Ինֆորմացիայի ազատության կենտրոնը հարկադիր ծառայության միջոցով ստացավ իր՝ 21.04.2009թ.-ին ուղարկած տեղեկատվություն ստանալու հարցման լիարժեք պատասխանը: Իսկ դատարանի պետտուրքի գումարը՝ 4000 դրամը, ՀԱՍԿ նախագահ Մովսես Շահվերդյանը կտրականապես հրաժարվեց վճարել՝ պատճառաբանելով, թե փող չունի:

Նախադեպային դատական գործեր

Ինֆորմացիայի ազատության կենտրոնի նախաձեռնած դատական գործերից մի քանիսն ունեցել են նախադեպային նշանակություն: Այդպիսի գործ էր 2009թ.-ին ավարտված՝ ԻԱԿ-ն ընդդեմ Ելփինի գյուղապետարանի դատական գործը(տես՝ http://www.foi.am/hy/all-cases/item/494/), որի դեպքում առաջին անգամ տեղեկատվության ազատության իրավունքը խախտած պաշտոնյան՝ Ելփինի գյուղապետը, ենթարկվեց վարչական պատասխանատվության՝ տուգանքի՝ 50.000 դրամի չափով:

2010թ.-ին նման գործ էր ԻԱԿ-ի դիմումը ՀՀ Սահմանադրական դատարան:

Ինֆորմացիայի ազատության կենտրոնի դիմումը ՀՀ Սահմանադրական դատարան

ԻԱԿ-ը 2010թ.-ի սեպտեմբերի 9-ին դիմել է ՀՀ սահմանադրական դատարան՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 151 եւ 152 հոդվածները ՀՀ Սահմանադրության 18 եւ 19 հոդվածներին հակասող եւ անվավեր ճանաչելու պահանջով: Բանն այն է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 151 հոդվածն առանց բացառության սահմանում է, որ «Վարչական պատասխանատվության ենթարկելու մասին գործերը հարուցվում են օրենքով վարչական իրավախախտումների վերաբերյալ արձանագրություններ կազմելու լիազորություն ունեցող մարմինների եւ պաշտոնատար անձանց հայցադիմումների հիման վրա» եւ հնարավորություն չի տալիս ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 223 հոդվածում թվարկված իրավախախտումներ կատարած պաշտոնատար անձանց, այդ թվում 189.7 հոդվածով նախատեսված իրավախախտում կատարած պաշտոնատար անձին վարչական պատասխանատվության ենթարկելու գործ հարուցել տուժողի հայցադիմումի հիման վրա: Իսկ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 152 հոդվածը, քանի որ դրանով վարչական պատասխանատվության ենթարկելու մասին հայցադիմումին ներկայացվող պահանջների ցանկում առանց բացառության բոլոր իրավախախտումների, այդ թվում ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 223 հոդվածում թվարկված իրավախախտումների, մասնավորապես՝ 189.7 հոդվածով նախատեսված վարչական իրավախախտման համար սահմանված է արձանագրության կազմման վերաբերյալ տեղեկություններ նշելու եւ վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությունը կցելու պայման:

2010թ.-ի փետրվարի 5-ին ՀՀ Սահմանադրական դատարանում քննվեց ՀՀ Վարչական դատավարության օրենսգրքի 151 եւ 152 հոդվածները ՀՀ Սահմանադրությանը հակասող ճանաչելու վերաբերյալ ԻԱԿ-ի դիմումը: Հենց նույն օրն էլ Սահմանադրական դատարանը հրապարակեց իր որոշումը: Սահամանադրական դատարանը որոշեց, որ ՀՀ Վարչական դատավարության օրենսգրքի 151 եւ 152 հոդվածները Սահմանադրությանը չեն հակասում: Սահմանադրական դա-

տարանը արձանագրեց, որ խնդիրը այս ոլորտում օրենսդրական բացի առկայությունն է: Անհրաժեշտ է, որպեսզի իրավասու մարմինը, այսինքն՝ ՀՀ Ազգային ժողովը համապատասխան նախաձեռնություն իրականացնի՝ ՀՀ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում բարեփոխումներ կատարելու եւ վարչական պատասխանատվության ենթարկելու ինստիտուտի օրենսդրական բացը լրացնելու համար:

Վերջում ՀՀ Սահմանադրակյան դատարանի նախագահ Գագիկ Հարությունյանը շնորհակալություն հայտնեց ԻԱԿ-ին նման կարեւոր խնդրին անդրադառնալու համար:

Ինֆորմացիայի ազատության կենտրոնի այս նախաձեռնությունն անհետեւանք չմնաց. ՀՀ Ազգային ժողովի Պետական-իրավական հարցերի մշտական հանձնաժողովը նախագծել է վարչական օրենսդրության բարեփոխումների փաթեթ, որով նախատեսվում է նաեւ ՀՀ Վարչական դատավարության օրենսգրքից հանել վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություն կազմելու պահանջը:

4 Հանրային քարոզարշավ

2001թ.ից մինչ օրս Ինֆորմացիայի ազատության կենտրոնն իրականացնում է հանրային լայն քարոզարշավ տեղեկատվության ազատության խնդիրներին հանրությանն իրազեկելու նպատակով: 2010թ. ընթացքում այս նպատակով իրականացվել են մի շարք գործողություններ:

Տեղեկատվության ազատության ամենամյա մրցանակաբաշխություն 2010

2003թ.-ից ի վեր՝ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի ընդունումից հետո ամեն տարի սեպտեմբերի 28-ին՝ Տեղեկատվության ազատության միջազգային օրը, Ինֆորմացիայի ազատության կենտրոնը կազմակերպում է Տեղեկատվության ազատության մրցանակաբաշխություն, որի միջոցով խրախուսվում է պետական մարմինների հրապարակային եւ բաց աշխատանքը, միաժամանակ՝ քննադատվում փակ եւ գաղտնի գործունեությունը:

2010թ.-ին ՏԱ մրցանակաբաշխություն 8-րդն էր: Այս մրցանակաբաշխության ժամանակ դրական մրցանակներ՝Ոսկե բանալիներ են շնորհվել.

- Գորիսի համայնքապետարանին (քաղաքապետ՝ Նելսոն Ոսկանյան)՝ որպես 2010թ. ամենահրապարակային գործող մարմին,
- ՀՀ կառավարության էլեկտրոնային կառավարման կայքին՝ www.e-gov.am-ին՝ որպես 2010թ. տեղեկատվության տրամադրման լավագույն ինտերնետային պաշտոնական կայք,
- «Մենք ենք այս քաղաքի տերը» քաղաքացիական նախաձեռնությանը՝ որպես 2010թ. տեղեկություն ստանալու իրավունքը լավագույնս կիրառած հասարակական կազմակերպություն,
- լրագրող Արամ Զաքարյանին («Առավոտ» օրաթերթ)՝որպես 2010թ. տեղեկատվության ազատության հիմնահարցերն ամենաակտիվ լուսաբանած լրագրող,
- «Խոսքի իրավունք» հաղորդաշարին (h2 հեռուստաընկերություն)՝ որպես 2010թ. Տեղեկատվության ազատության հիմնահարցերն ամենաակտիվ լուսաբանած հեռուստահաղորդում,
- Հակոբ Թովմասյանին՝ որպես 2010թ. տեղեկություն ստանալու իրավունքը լավագույնս օգտագործած քաղաքացի:

Մրցանակաբաշխության բացասական մրցանակը Ժանգոտ կողպեքն է՝ որպես գաղտնիության եւ վատ աշխատանքի խորհրդանիշ: 2010թ.-ին այս մրցանակին արժանացավ Ստեփանավանի համայնքապետարանը (քաղաքապետ Սարգիս Ղարաքեշիշյան)՝ որպես 2010թ. «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքով սահմանված պարտականություններն ամենավատը կատարող մարմին:

Մրցանակակիրներին որոշում է տեղական եւ միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներից, լրագրողներից, ոլորտի փորձագետներից կազմված անկախ ժյուրին: Ժյուրիի անդամներն ամփոփում են իրենց եւ ԻԱԿ մոնիտորինգների արդյունքները, քննարկում են նաեւ Կենտրոնի եռամսյակային Սեւ ցուցակները, որոնցում ընդգրկվում են տեղեկություն ստանալու իրավունքը խախտած պաշտոնյաներն ու գերատեսչությունները:

Հրապարակումներ

Տարվա ընթացքում ԻԱԿ-ը հրապարակել է տեղեկատվության ազատության վերաբերյալ բազմաթիվ հոդվածներ, ուսումնասիրություններ եւ վերլուծություններ: Դրանց մեծ մասը հայերեն եւ անգլերեն լեզուներով տեղ է գտել նաեւ կազմակերպության ինտերնետային կայքում՝ www.foi.am/hy/articles/:

«Մամուլի ազատություն եւ տեղեկատվություն ստանալու իրավունք» լուսանկարների հավաքածու

2010թ. հուլիսին Ինֆորմացիայի ազատության կենտրոնը հրատարակեց մամուլի եւ տեղեկատվության ազատության վերաբերյալ լուսանկարների ժողովածու: Այստեղ ներառվել են ԻԱԿ կողմից 2010թ.-ի մայիսի 3-ից մեկ շաբաթ անցկացրած՝ տեղեկատվության ազատության թեմայով ֆոտոցուցահանդեսին մասնակցած բոլոր 30 լուսանկարները, ինչպես նաեւ ցուցահանդեսի բացման արարողությանը ՀՀ-ում ԱՄՆ արտակարգ եւ լիազոր դեսպան Մարի Յովանովիչի, ԵԱՀԿ դեսպան Սերգեյ Կապինոսի, Հայաստանում ՄԱԿ-ի մշտական համակարգող Դաֆինա Գերչևայի եւ Ինֆորմացիայի ազատության կենտրոնի նախագահ Շուշան Դոյդոյանի ելույթները :

«Տեղեկատվության ազատության իրավական կարգավորումը ՀՀ-ում. մեկնաբանություններ»

2010թ. Ինֆորմացիայի ազատության կենտրոնը նախաձեռնեց «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի ոչ պաշտոնական մեկնաբանությունների հրապարակում: Գիրքը բաղկացած է երկու մասից. Առաջին մասը տեղեկատվության ազատության ոլորտի վերլուծությունն է՝ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի կիրառման պրակտիկան, տեղեկատվության ազատության դատական պրակտիկան, ոլորտում առկա խնդիրները եւ ձեռքբերումները: Իսկ գրքի երկրորդ մասը ներկայացնում է «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի մանրամասն մեկնաբանություն՝ ըստ հոդվածների: Գիրքը հրատարակվել է 600 օրինակով: Այն կարող եք կարդալ ԻԱԿ-ի կայքում՝ www.foi.am/hy/books/

Դատական գործերի ժողովածու 2007-2010

2010թ.-ի ապրիլին լույս տեսավ տեղեկատվության ազատության վերաբերյալ դատական գործերի ժողովածու: Սա ԻԱԿ-ի հրապարակած երկրորդ նմանատիպ ժողովածուն է: Այն ներառում է տեղեկատվության ազատության ոլորտուԿենտրոնի նախաձեռնած տեղեկատվության ազատության վերաբերյալ դատական 18 գործերի համառոտ նկարագրությունը, ինչպես նաեւ դատական գործերի բոլոր փաստաթղթերը՝ տեղեկություն ստանալու հարցում, հայցադիմում, դատարանի վճիռ եւ այլն: Ժողովածուն ներառում է նաեւ տեղեկատվության ազատության դատական նախադեպի ամբողջական ամփոփ վերլուծություն՝ վիճակագրություն, տարբեր տարիներին նախաձեռնած դատական գործերի համեմատական վերլուծություն, տեղեկատվության ազատության դատական պրակտիկայի խնդիրները եւ առաջընթացները:

«Դու տեղյակ լինելու իրավունք ունես» պաստառներ

Տեղեկատվության ազատության իրավունքը երիտասարդության, մասնավորապես ուսանողների շրջանում տարածելու, այդ իրավունքի մասին ուսանողներին տեղեկացնելու նպատակով Ինֆորմացիայի ազատության կենտրոնը պատրաստել եւ 400 օրինակով հրատարակել է պաստառներ: Պաստառի նկարն ընտրվել է 2010թ.-ին Ինֆորմացիայի ազատության կենտրոնի կազմակերպած՝ «Մամուլի ազատություն, Տեղեկատվություն ստանալու իրավունք» խորագրով ֆոտո-

ցուցահանդեսին ներկայացված շուրջ 300 նկարներից: Պաստառները տարածվել են Երեւանի պետական եւ մասնավոր բարձրագույն ուսումնական հաստատություններում, ինչպես նաեւ փակցվել են ԻԱԿ կողմից ՀՀ մարզերում տեղադրված տեղեկատվական ցուցատախտակների վրա:

«Դու տեղյակ լինելու իրավունք ունես» տեղեկագիր

2010թ. Կենտրոնը հրատարակել է տեղեկագրի 4 համար: Տեղեկագիրը Հայաստանում միակ մասնագիտացված պարբերականն է տեղեկատվության ազատության հիմնախնդիրների վերաբերյալ, լույս է տեսնում 2001թ.ից ի վեր եռամսյակը մեկ անգամ եւ ներառում է ինչպես տեղեկատվության ազատության իրավունքի վերաբերյալ վերլուծություններ եւ հոդվածներ, այնպես էլ հետաքրքիր եւ օգտակար տեղեկություններ պետական կառավարման եւ տեղական ինքնակառավարման մարմինների եւ պաշտոնյաների մասին, օրինակ՝ պաշտոնյաների գույքի եւ եկամուտների հայտարարագրերում ներառված տվյալների տեղեկանքներ, մարզպետների որոշումներ, մարզպետարանների, համայնքների, Երեւանի տարբեր վարչական շրջանների, նախարարությունների տարեկան բյուջեներ եւ այլն:

Հեռուստատեսային հաղորդումներ

«Դու տեղյակ ես» հաղորդաշարը նվիրված է մարդկանց տեղեկություն ստանալու իրավունքին: Հաղորդաշարով ներկայացվում է՝ ինչպես մարդիկ կարող են ՀՀ օրենսդրության համաձայն ստանալ իրենց անհրաժեշտ տեղեկությունները, ուր եւ ինչպես դիմեն, ինչպես վարվեն, երբ հարցումը մերժվում է եւ այլն: Եվ ամենակարեւորը, ինչպես մարդիկ կարող են տեղեկություն ստանալու իրավունքի միջոցով իրականացնել մյուս իրավունքները՝ սպառողի իրավունքը, աշխատանքի կամ կրթության իրավունքը, սոցիալական ապահովության կամ առողջության իրավունքը, եւ այլն:

Յուրաքանչյուր հաղորդման տեւողությունը 30 րոպե է: Հաղորդումները հեռարձակվել են ամեն շաբաթ «Երկիր Մեդիա» հեռուստաընկերությամբ: Բոլոր հաղորդումները կարող եք դիտել նաեւ ԻԱԿ-ի կայքում՝ www.foi.am/hy/tv-program/

2010 թվականի հունվար-ապրիլ ամիսներին եթեր են հեռարձակվել նախատեսված բոլոր 12 հաղորդումները, ըստ հետեւյալ թեմաների.

- Կրթություն ստանալու իրավունք
- Աշխատանքային իրավունք
- Սպառողների իրավունքների պաշտպանություն
- Մաքուր միջավայրում ապրելու իրավունքը
- Մասնակցություն երկրի կառավարմանը
- Անվճար բուժսպասարկում երեխաներին
- Ապագա մայրերին. առողջ ապրելու իրավունք
- Դատական նյութերի մատչելիություն
- ՀՀ անձնագիր ստանալու իրավունք
- Ընտրելու իրավունք
- Երեխաների իրավունք
- Տեղեկատվության ազատության միջազգային օր:

5 Խորհրդատվություն քաղաքացիներին

2010թ.-ին Ինֆորմացիայի ազատության կենտրոնը շարունակել է քաղաքացիներին ապահովել տեղեկատվության ազատության իրավունքի վերաբերյալ խորհրդատվությամբ: 2010թ. ընթացքում կենտրոնն ապահովել է խորհրդատվությամբ 350 քաղաքացու:

Կազմակերպության այս գործունեությունը ներառում է 3 ուղղություն.

- զուտ խորհրդատվություն պետական կառավարման ու տեղական ինքնակառավարման, ինչպես նաեւ այլ տեղեկատվություն տնօրինողներից տեղեկություն ստանալու հնարավորության եւ կարգի վերաբերյալ,
- գործնական աջակցություն քաղաքացիներին հարցումներ կազմելու հարցում: Այն դեպքերում, երբ քաղաքացիների ուղարկած հարցումները մնացել են անպատասխան կամ պատասխանը եղել է ոչ լիարժեք, Ինֆորմացիայի ազատության կենտրոնն իր անունից նույնաբովանդակ հարցում է ուղարկել տվյալ տեղեկատվություն տնօրինողին եւ քաղաքացու համար ստացել պահանջվող տեղեկությունները:
- դատական գործերի պարտաստում եւ ներկայացուցչություն դատարանում: Ինֆորմացիայի ազատության կենտրոնը հետամուտ է լինում սեփական նախաձեռնությամբ կամ քաղաքացիների համար ուղարկված եւ անպատասխան մնացած, թերի կամ անհիմն, ոչ ըստ էության պատասխան ստացած հարցումներին՝ փորձելով լրացուցիչ հարցման կամ բանավոր ճշտման միջոցով ստանալ պահանջված տեղեկությունները: Այն դեպքերում, երբ դա չի հաջողվում, ԻԱԿ-ը դիմում է դատարան՝ պահանջված տեղեկությունները ստանալու, ինչպես նաեւ տեղեկատվության ազատության իրավունքը խախտած պաշտոնյային վարչական պատասխանատվության ենթարկելու պահանջներով:

Խորհրդատվությունն իրականացվել է Ինտերնետի միջոցով, հեռախոսով եւ քաղաքացիների կողմից ԻԱԿ գրասենյակ այցելությունների միջոցով:

Հավելենք նաեւ, որ Ինֆորմացիայի ազատության կենտրոնը խորհրդատվություն է իրականացրել արտերկրում գտնվող ՀՀ քաղաքացիների համար՝ ՀՀ պետական մարմիններից ստանալով նրանց հետաքրքրող տեղեկությունները:

6 ՏԱ օրենսդրության կիրառման եւ կառավարման համակարգի հրապարակայնության մոնիտորինգ

ՏԱ օրենսդրության կիրառման եւ կառավարման համակարգի հրապարակայնության մոնիտորինգն ԻԱԿ-ն իրականացնում է երկու մեթոդով՝ տարբեր գերատեսչություններ տեղեկություն ստանալու հարցումներ ուղարկելու եւ պաշտոնական կայքերի անմիջական դիտարկման միջոցով:

Հարցումներ

Ինֆորմացիայի ազատության կենտրոնը տարեկան 1000-ից ավելի տեղեկություն ստանալու հարցումներ է ուղարկում պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններ՝ այսպիսով լինելով "Տեղեկատվության ազատության մասին" ՀՀ օրենքն ամենաակտիվ օգտագործող կազմակերպություններից մեկը:

Պետական կառավարման եւ տեղական ինքնակառավարման մարմիններում տեղեկատվության ազատության իրական վիճակը գնահատելու, պետական մարմիններին բաց եւ թափանցիկ աշխատելուն պարտավորեցնելու, ինչպես նաեւ քաղաքացիների համար անհրաժեշտ տեղեկություններ ստանալու համար Ինֆորմացիայի ազատության կենտրոնը, ինչպես նախորդ տարերին, 2010թ.-ին եւս շարունակել է տեղեկություններ ստանալու գրավոր հարցումներով դիմել տարբեր մարմինների:

Հարկ է նշել, որ Ինֆորմացիայի ազատության կենտրոնի ուղարկած վերոնշյալ հարցումների մի մասն էլ ուղարկվել է ԻԱԿ դիմած քաղաքացիների խնդրանքով՝ նրանց համար տեղեկություն ստանալու նպատակով:

ԻԱԿ ուղարկած հարցումները ոչ միայն հնարավորություն են տալիս պետական մարմիններից ստանալ անհրաժեշտ տեղեկությունները, այլ նաեւ պատկերացում կազմել տվյալ մարմնում տեղեկատվության ազատության վիճակի վերաբերյալ: Այս հարցումներին տեղեկատվություն տնօրինող մարմինների կողմից ներկայացվող պատասխանների տրամադրման ժամկետների, պատասխան գրությունների ամբողջականության, հարցումների պատասխանը ստանալու գործընթացի վերլուծությունն էլ իր հերթին հնարավորություն է տալիս վերհանել տեղեկատվության ազատության ընդհանուր վիճակը, խնդիրներն ու առաջընթացները:

2010թ.-ի ընթացքում Ինֆորմացիայի ազատության կենտրոնը տարբեր մարմինների շուրջ 1050 գրավոր հարցում է ուղարկել: Հարցումներ ուղարկվել են՝ Երեւանի վարչական շրջաններ եւ Երեւանի քաղաքապետարան, ՀՀ նախարարություններ, ՀՀ մարզպետարաններ, մարզային համայնքներ, բարձրագույն ուսումնական հաստատություններ, պետական ոչ առեւտրային կազմակերպություններ, ՀՀ ԿԱ Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե, ՀՀ ԱԴ Իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալություն եւ այլն:

Պաշտոնական կայքերի վերլուծություն

2010թ.-ի ընթացքում Ինֆորմացիայի ազատության կենտրոնը վերլուծել է մի շարք պետական կառավարման մարմինների ինտերնետային կայքերի համապատասխանությունը «Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքին՝ փորձելով պարզել, թե որքանով է տվյալ գերատեսչության կողմից տնօրինվող տեղեկատվությունը հրապարակվում այդ մարմնի ինտերնետայի կայքում: Ինտերնետային կայքերը վերլուծելիս հաշվի էր առնվում արդյոք տվյալ մարմնի ինտերնետային կայքում առկա են «Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքով սահմանված պարտադիր հրապարակման ենթակա տեղեկությունները, արդյոք հրապարակված է տեղեկատվության տրամադրման համար պատասխանատու անձի կոնտակտային տվյալները, առկա են արդյոք պետական մարմնի ինտերնետային կայքում ՏԱ վերաբերյալ ենթաբաժին, տեղեկություն ստանալու օրինակելի ձեւ, ինչպես նաեւ տեղեկություն ստանալու էլեկտրոնային հարցմամբ դիմելու հնարավորություն, արդյոք էլեկտրոնային տարբերակով տրամադրվում է տեղեկատվություն: Կայքերի վերլուծությունների արդյունքում բացահայտված թերությունները ներկայացվել են համապատասխան գերատեսչություններին՝ դրանք վերացնելու առաջարկով:

Այսպես, 2010թ-ի սեպտեմբերին ԻԱԿ-ն իրականացրել է ՀՀ Գլխավոր դատախազության ինտերնետային կայքի վերլուծություն: Արդյունքում վեր են հանվել դատախազության ինտերնետայի կայքում տեղեկատվության ազատության վերաբերյալ որոշ բացթողումներ: Այս վերլուծությունն ունեցել է իր դրական հետեւանքը. հրապարակումից երկու օր անց ՀՀ Գլխավոր դատախազության համապատասխան աշխատակիցները լրացրել են դատախազության ինտերնետային կայքը՝ վերացնելով բացթողումները եւ կայքը համապատասխանեցնելով «Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքի պահանջներին:

2010թ.-ի ընթացքում Ինֆորմացիայի ազատության կենտրոնը վերլուծել է նաեւ ՀՀ Կառավարության՝ էլեկտրոնային կառավարում (e-gov) կայքը: Արդյունքում, ԻԱԿ-ի կազմակերպած՝ Տեղեկատվության ազատության ամենամյա մրցանակաբաշխության ժամանակ դրական մրցանակ՝ Ոսկե բանալի տրվեց ՀՀ կառավարության էլեկտրոնային կառավարման կայքին՝ որպես 2010թ.-ի տեղեկատվության տրամադրման լավագույն ինտերնետային պաշտոնական կայք:

Իրականացվել է նաեւ ՀՀ Կրթության եւ գիտության նախարարության ինտերնետային կայքի վերլուծություն: Արձագանքելով ԻԱԿ ուսումնասիրությանը՝ ԿԳՆ-ն հայտնել է, որ նախարարության համար պատրաստվում է նոր ինտերնետային կայք, որը կլինի ավելի հագեցած տեղեկատվությամբ եւ որում անպայման կբացակայեն նաեւ ԻԱԿ-ի վերհանած թերությունները եւ բացթողումները: Նմանատիպ ուսումնասիրություն ԻԱԿ-ը կատարել է ՀՀ Արդատարադատության նախարարության ինտերնետային կայքի համար: Հարկ է նշել, որ այս դեպքում վերլուծության նախաձեռնողը հենց նախարարությունն էր, որին անհրաժեշտ էր վերհանել տեղեկատվության ազատության եւ թափանցիկ աշխատանքի առումով նախարարության կայքի թերությունները եւ համապատասխան առաջարկություններ ընդունել՝ կայքը բարելավելու համար: Այս դեպքում նույնպես ԻԱԿ-ի կատարած առաջարկությունները հաշվի են առնվել:

2010թ.-ին ուսումնասիրվել է ՀՀ Արդարադատության նախարարության Իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության ինտերնետային կայքը: ԻԱԿ վերլուծությունը ցույց տվեց, որ Իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության ինտերնետային կայքը չի գործում: Այնտեղ զետեղված էր միայն ՀՀ ԱՆ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության պետի նկարն ու կենսագրությունը, ինչպես նաեւ նշված էր, որ կայքը չի գործում անորոշ ժամանակով: ԻԱԿ միջամտության արդյունքում ՀՀ ԱՆ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության պետ Արմեն Գեւորգյանը վստահեցրեց, որ Պետական ռեգիստրի գործակալության կայքը կարճ ժամկետում վերագործարկվեց:

7 Միջոցառումներ

Ֆոտոցուցահանդես՝ Մամուլի ազատության օրվան նվիրված

2010թ. ՅՈՒՆԵՍԿՕՆ Մամուլի ազատության համաշխարհային օրը՝ մայիսի 3-ը, նվիրել էր տեղեկատվության ազատությանը: Այդ իսկ առիթով Ինֆորմացիայի ազատության կենտրոնը ԱՄՆ Միջազգային զարգացման գրասենյակի, ԵԱՀԿ Երեւանի գրասենյակի եւ ՄԱԿ-ի Հանրային տեղեկատվության վարչության հետ համատեղ կազմակերպեց ֆոտոցուցահանդես՝ «Մամուլի ազատություն, Տեղեկատվություն ստանալու իրավունք" խորագրով:

Ներկայացվել էին շուրջ երեք հարյուր աշխատանքներ, որոնցից ժյուրին ընտրեց երեսուն ինքնատիպ լուսանկար: Այս ցուցահանդեսի նպատակն էր արտացոլել խոսքի և տեղեկատվության մատչելիության իրավունքի կիրառման մարտահրավերներն ու հնարավորությունները եւ կառավարություններին, լրատվամիջոցների ներկայացուցիչներին եւ հանրությանը հիշեցնել այդ իրավունքի կյանքի կոչման հարցում իրենց ունեցած դերի մասին: Ցուցահանդեսի բացումը տեղի ունեցավ 2010թ. մայիսի 3-ին, որին ներկա էին ՀՀ-ում ԱՄՆ արտակարգ եւ լիազոր դեսպան Մարի Յովանովիչը, ԵԱՀԿ դեսպան Սերգեյ Կապինոսը, Հայաստանում ՄԱԿ-ի մշտական համակարգող Դաֆինա Գերչևան, ՀՀ գլխավոր դատախազը, Կրթության եւ գիտության նախարարը, Հայաստանի լրագրողներ, պետական կառույցների և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներ: Ցուցահանդեսը տեւել է մեկ շաբաթ, որի ավարտից հետո լուսանկարները հրապարակվեցին Մամուլի ազատության օրվան նվիրված հատուկ հավաքածուում:

Աշխատանքային քննարկումներ

ՀՀ նախագահի աշխատակազմի «Հանրային կապերի եւ տեղեկատվության կենտրոն» ՊՈԱԿ-ի հետ համատեղ 2010թ-ի մարտի 4-ին Ինֆորմացիայի ազատության կենտրոնը ՀՀ մարզպետարանների տեղեկատվության եւ հասարակայնության հետ կապերի ստորաբաժանումների ղեկավարների եւ մարզպետների մամուլի քարտուղարների համար կազմակերպեց աշխատանքային քննարկում՝ «Հրապարակայնության ապահովումը պետական կառավարման համակարգում» թեմայով: Հանդիպման ժամանակ ներկայացվեց ՀՀ նախագահի աշխատակազմի «Հանրային կապերի եւ տեղեկատվության կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից մշակված «Միասնական տեղեկատվական հարթակը»: Այս միասնական էլեկտրոնային համակարգում ընդգրկված են բոլոր նախարարությունները եւ կառավարությանն առընթեր մարմինները, Կենտրոնական բանկը, ինչպես նաեւ՝նախատեսվում էր ընդգրկելու բոլոր մարզպետարանները: Հանդիպման նպատակն էր մասնակիցներին ծանոթացնել տեղեկատվական միասնական հարթակը, բացատրելու հարթակի հետ աշխատանքը, աշխատանքային գործիքներն ու հնարավորությունները: Հարթակն ամենօրյա կապ է ապահովում պետական բոլոր մարմինների հասարակայնության հետ կապերի վարչությունների եւ մամլո քարտուղարների միջեւ՝ տեղեկատվության փոխանակման եւ տեղեկատվության ապահովման նպատակով: Այն բաղկացած է մի քանի բաժիններից, որոնց մի մասը բաց է բոլոր գրանցված անձանց համար, մի մասը հասանելի է միայն համակարգողներին:

Արդյունքում, ՀՀ մարզպետարանների տեղեկատվության եւ հասարակայնության հետ կապերի ստորաբաժանումների ղեկավարները եւ մարզպետների մամուլի քարտուղարներն արդեն աշխատում են տեղեկատվական միասնական հարթակով:

ՀՀ դատախազության ներկայացուցիչների եւ լրագրողների մասնակցությամբ Ինֆորմացիայի ազատության կենտրոնը 2010թ. հոկտեմբերի 23-24–ին կազմակերպեց աշխատանքային քննարկում՝ «Տեղեկատվության եւ արտահայտվելու ազատությունները ՀՀ դատախազության համակարգում” թեմայով: Աշխատանքային քննարկումը նպատակ ուներ բարելավել լրագրող-դատախազ երկխոսությունը, հնարավորություն տալ պարզաբանելու դատախազության՝ որպես իրավապահ մարմնի աշխատանքի առանձնահատկությունները՝ կապված տեղեկատվության տրամադրման եւ լրագրողների հետ աշխատանքի հետ: Այս աշխատանքային հանդիպման ընթացքում քննարկվել են տեղեկատվության ազատության իրավունքի խնդիրները, այդ իրավունքի կիրառման պրակտիկան:

Մասնավորապես, քննարկվեցին հետեւյալ թեմաները՝ տեղեկատվության եւ արտահայտվելու ազատությունները եւ մարդու բարի համբավի, պատվի եւ արժանապատվության պաշտպանությունը, Տեղեկատվության ազատությունը եւ կոռուպցիոն ռիսկերի նվազեցումը, անձի սահմանադրական իրավունքների պաշտպանությունը, ինչպես եւ՝ վիրավորանք, զրպարտություն. Պատասխանի իրավունք, հերքման իրավունք: Աշխատանքային քննարկմանը մասնակցում էին լրագրողներ Երեւանից, մարզային զանգվածային լրատվամիջոցներից, Գլխավոր դատախազության, ինչպես նաեւ մարզային դատախազությունների ներկայացուցիչներ:

■ 2010թ.-ի հաջորդ կարեւորագույն ձեռքբերումն իրականացվել է Ինֆորմացիայի ազատության կենտրոնի եւ ՀՀ Կառավարության համատեղ ջանքերով: Նախապատմությունը հետեւյալն է. 2010թ.-ի սեպտեմբերի 28-ին ԻԱԿ կազմակերպած Տեղեկատվության ազատության ամենամյա մրցանակաբաշխության ժամանակ ՀՀ Կառավարության աշխատակազմի ղեկավար Դավիթ Սարգսյանը նշեց, որ ՀՀ Վարչապետ Տիգրան Սարգսյանի հանձնարարությամբ ՀՀ Կառավարության www.gov.am պաշտոնական կայքում հրապարակվում են Պետական ոչ առեւտրային կազմակերպությունների կնքած պայմանագրերը եւ բյուջեի ծախսերը: Նմանատիպ ՊՈԱԿ-ներից մեկը՝ «Երեւանի կառուցապատման եւ ներդրումային ծրագրերի գրասենյակ” ՊՈԱԿ-ը, 2009թ.-ին ԻԱԿ կազմակերպած Տեղեկատվության ազատության ամենամյա մրցանակաբաշխության ժամանակ բացասական Փակ կողպեք մրցանակն էր ստացել՝ ՊՈԱԿ-ի կնքած պայմանագրերը եւ բյուջեի ծախսերը չտրամադրելու համար: Դրանից հետո ՀՀ Կառավարության կայքում ստեղծվեց «Թափանցիկ կառավարում» բաժինը, որտեղ վերոնշյալ տեղեկատվությունն արդեն պարբերաբար հրապարակվում է: Այս նախաձեռնությունը հետագա զարգացում ունեցավ. գործարկվեց www.e-gov.am պաշտոնական կայքը՝ վերոնշյալ տեղեկատվական հարցերը բավարարելու եւ պետական բյուջեի ծախսերը էլեկտրոնային տարբերակով հրապարակային դարձնելու նպատակով:

Ծախսեր	Աշխատավարձ	Հոնորարներ	Ծրագրային գործողություններ	Վարչական	Պետությանը վճարված հարկեր	Ընդամենը
Ընդհանուր ԱՄՆ դոլար	24,412	21,569	49,663	28,685	15,452	138,936
Ընդհանուր ՀՀ դրամ	9,000,193.94	7,951,889.45	18,309,349.88	10,575,179.77	5,815,800.00	51,652,413.04

www.foi.am

«ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԿ
FREEDOM OF INFORMATION CENTER OF ARMENIA

Հասցե/ Address: ք. Երեւան, Փ. Բյուզանդի 1/3, 4-րդ հարկ
4-th floor, 1/3 P. Buzand str., Yerevan, Armenia
Հեռ./ֆաքս, Tel/fax: 521775#427
Էլ. փոստ/ e-mail: foi@foi.am
Կայք/Site: www.foi.am